



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՐԴԵՐՁԸ ԱՎԵՏԱՐԱՆ
ՏՈՒՆԻ ԱՌԻԹՈՎ
(7 ապրիլի, 2013 թ.)**



Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում տիկնանց եւ օրիորդաց՝ Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի եւ Մայրության ու գեղեցկության օրվա առիթով:

Ավետման տոնը առ Աստված փառաբանության եւ Բարձրալի ամենագոր կամքին Սուրբ Կույսի օրհնակով հնազանդվելու լուսավոր խորհուրդն է կրում, ով իր մաքուր հավատի, համեստության ու խոնարհության շնորհիվ դարձավ Տիրոջ շնորհընկալ եւ օրհնյալ համարվեց կանանց մեջ:

Մեր մաղթանքն է, որ Սուրբ Կույսի պայծառ կերպարը միշտ ներշնչման աղբյուր եւ օրհնակ լինի մեր մայրերի, քույրերի ու դուստրերի համար, որպեսզի չերմ հավատքով ապրեն իրենց կյանքը եւ նվիրումով, ազնիվ ու բարի գործերի օրհնությամբ լցնեն իրենց ընտանեկան հարկերը եւ հոգեւոր ու ազգային մեր կյանքը:

Բոլոր տիկնանց ու օրիորդաց համար հայցում ենք գթառատ բարեխոսությունը Սուրբ Տիրամոր, որ նրա Որդու եւ մեր Տիրոջ օրհնության ներքո ապրեն խաղաղության մեջ, քաջառողջ, բարոր ու երջանիկ:

Մեր Տեր Հիսուս Զրիստոսի շնորհներն ու սերը թող լինեն ամենքիդ հետ. Ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԿՇԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության, Մեծարգո Նախագահ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետության,

Հարգարժան Նախագահ Ազգային Ժողովի,

Բարձրաշնորհ եւ Գերաշնորհ հոգեւոր հայրեր,

Պատվարժան պետական այրեր, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ,

Միլիտերի հյուրեր եւ ներկաներ Հայրենիքի լուսաճեմ կյանքի աղոթքն ու մաղթանքը մեր շուրթերին՝ ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի երդմնակալության առիթով:

Փառք եւ գոհություն ենք մատուցում Երկնավորին՝ մեր ժողովրդին պարգեւած անպատում շնորհների համար, որոնցով ապրել, ստեղծել ու մաքառել է եւ այսօր անցկում ու լավատես՝ հայրենյաց սիրով կերտում է իր ազատ կյանքի նոր օրը:

Անկախ պետականության վերականգնումից ի վեր մեր երկիրը ահռելի դժվարություններ է հաղթահարել, վերակառուցումների ու բարեփոխումների ոչ դյուրին ճանապարհ անցել: Այս պահին զնահատանքով եւ աղոթքով ենք հիշում հայրենի անկախ պետականության հաստատման եւ կայացման գործին իրենց նվիրյալ ծառայությունը բերած ազգի բոլոր զավակներին: Պետականաշինության ընթացքներում

Դուք՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ, ծանրագին ավանդ եք բերել՝ լիներով կերտողներից մեկը մեր պատմության այս հուսարեր ժամանակաշրջանի: Ձեր նվիրյալ ծառայությունը Հայրենիքին ու ժողովրդին առաջնորդեց Ձեզ պետական ամենաբարձր պատասխանատվության: Նախագահի պաշտոնը հինգ տարի առաջ Դուք ստանձնեցիք երկրում ներքին լարվածության բարդ պայմաններում եւ, սակայն, ամերեր կամքով եւ հաստատուն քայլերով ամենայն ջանք գործադրեցիք, որպեսզի պահպանվի կայունությունը, եւ շարունակվեն բարեփոխումներն ու բնականոն զարգացման ընթացքը մեր Հայրենիքի: Ձեր նախագահության շրջանը եղավ պայքար եւ ծառայություն դժվարությունների եւ մարտահրավերների դիմագրավման, Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ եւ արդար կարգավորման, արտաքին քաղաքականության ոլորտում այլ պետությունների հետ հարաբերությունների ամրապնդման եւ գործակցության արդյունավորման:

Այսօր Վեհամոր Ավետարանի եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վրա երդվելով՝ Դուք նորոգեցիք ծառայական Ձեր ուխտը ազգին եւ Հայրենիքին: Նախագահական նոր շրջան է սկսվում՝ որոշակի նոր պահանջներով ու ակնկալվածքներով: Մեր երկրում նախորդ տարիներին արձա-



նագրված դրական տեղաշարժերով ու բարի արդյունքներով հանդերձ՝ տակավին կենսական նշանակություն ունեցող եւ վճիռների կարող բազում խնդիրներ ու հարցեր կան, որոնք այսօր եւս պահանջում են հայրենի իշխանությունների եւ համայն մեր ժողովրդի հետեւողական ջանքերը՝ պահպանելու համար մեր խաղաղ ու ապահով կյանքը եւ առաջընթացի հույսն ու հեռանկարը: Ամենքիս տեսիլքն է, որ մեր անկախ պետականության ուղին պարզելի արգասիքներ չեն ու ծաղկուն կյանքի՝ բարօրությամբ ու բարեկարգությամբ լեցուն, զարգացող տնտեսությամբ, գիտությամբ ու մշակույթով: Նախագահի բարձր առաքելությամբ Դուք կոչված եք իրագործման առաջնորդելու այս տեսլականը: Անտարակույս է, որ ժողովրդի բարօրությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, հոգեւոր-բարոյական արժեքներով հասարակական կյանքի առաջընթացը առավել ամրություն պիտի բերեն մեր երկրին, հեղինակություն՝ մեր պետության վարկին եւ առավել գործունե՝ մեր ազգային կյանքին: Մեր Եկեղեցին, ինչպես միշտ, իր գորակցությունն է բերելու հայրենի պետությանը եւ Ձեզ՝ հայրենաշեն ու ազգանվեր առաքելության իրականացման գործում:

Երդմնակալության այս առիթով Մեր հորդորն ենք ուղղում մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփյուռս՝ հայրենի իշխանու-

թյունների հետ միասնական ջանքեր գործադրել հանուն մեր Հայրենիքի եւ ազգային մեր կյանքի պայծառության, մեր հույսերի մարմնավորման: Միակամ ու միախորհուրդ ձգտենք ավելիով իրագործել այն, ինչ ազգի եւ հայրենի երկրի հանդեպ մեր նվիրական պարտքն ու պարտականությունն է: Չտկարանա՞նք դժվարությունների առջեւ: Առաքյալի խոսքի համաձայն՝ «հոգ տանենք միմյանց» սիրո եւ բարի գործերի հորդորելով» (Եբր. 10. 24), որպեսզի օր օրի շենանա ու բարգավաճի մեր Հայրենիքը՝ այսօր եւ միշտ մնալով ամուր պատվարն ու գործության ակունքը աշխարհասփյուռ հայության:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր Հայրենիքի անսասանության, մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքի հայցով: Աղոթում ենք Ձեզ համար, մեծարգո Նախագահ. թող Բարձրյալի օրհնությունը եւ Սուրբ Հոգու առաջնորդությունը միշտ լիեն Ձեզ հետ, գորացնեն Ձեզ, պահպանեն հաստատուն ու վճռական՝ կյանքի կոչելու Ձեր եւ մեր ժողովրդի բարի սպասումներն ու հույսերը: Թող Տերը օրհնի ազգս աշխարհասփյուռ, միշտ պահպանի Իր շնորհների մեջ՝ հավատքով հայցելու. «Տեր Աստված մեր, առաջնորդի մեզ եւ ուսուցանի մեզ արդարությամբ գնալ Զո ճանապարհներով, պահիք մեր կյանքը խաղաղության մեջ եւ մեր ընթացքը՝ Զեզ հաճելի. ամեն» (ժամագիրք):



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

5 ապրիլի

Ֆրանսիացի կաթոլիկ ուխտավորների



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Մոմպելիե քաղաքից Հայաստան ժամանած կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ հայր Զրիստիան Դամեռնի:

Հանդիպման սկզբում հայր Դամեռնն ուրախություն հայտնեց Սբ Էջմիածնում գտնվելու կապակցությամբ, ապա տեղեկացրեց, որ խումբն այցելել է Հայաստան՝ Հայ Եկեղեցուն ու հայկական մշակույթին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով:

Այնուհետև կաթոլիկ ուխտավորներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը՝ ողջունելով քույր Եկեղեցու հավատավոր զավակների այցը Հա-

յաստան: Նորին Սրբությունն ուխտավորներին համառոտ ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին, հակառակ պատմության ընթացքում կրած բազմաթիվ դժվարությունների ու խոչընդոտների, այսօր էլ շարունակում է իր ծառայությունը բերել հավատավոր հայ ժողովրդին:

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ կրթադաստիարակչական եւ սոցիալական ոլորտներում Եկեղեցու կողմից կատարվող աշխատանքներին, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների ջերմ հարաբերություններին ու համագործակցությանը:

6 ապրիլի

Մասնավոր վարդապետության աստիճանի արժանացած հոգեւորականներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց Եկեղեցում, ձեռնադրվեցին Վանական խորհրդի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արք. Լավասարյանը, Մայր Աթոռի պաշտոնական մամուլի գրասենյակի տնօրեն Շահե արք. Լավասարյանը, Տաթևի վանքի վանահայր Միքայել արք. Գեղորգյանն ու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ծխա-հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Չաքարիա արք. Բաղդույանը ստացան մասնավոր վարդապետության աստիճան:

Նույն օրը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նորընծա վարդապետներին ընդունեց Ա-

մենայն Հայոց Կաթողիկոսը՝ նրանց բերելով իր օրհնությունն ու շնորհավորանքները: Ուրախություն հայտնելով տվչության առիթով՝ Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց անհրաժեշտությունը հավատքի խոր ապրում եւ խոնարհ սիրտ ու հոգի ունեցող եկեղեցականների՝ նշելով, որ առանց խոնարհության ու ծառայանքի միջոցով՝ զիտելիքները չարիք են դառնում անձի համար՝ նրանում գործացնելով մեծամտությունը: Վերջում հայցելով Աստծու ամենաառատ շնորհներն ու գորակցությունը նորընծաներին՝ իրենց առաքելության այդ նոր ճանապարհին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց վարդապետներին եւ նրանց շնորհեց վարդապետական լաւջախաչեր:

7 ապրիլի

Իսպաղացի կաթոլիկ ուխտավորների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսպաղացի տարբեր քաղաքներից Հայաստան ժամանած կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Մոսկվայի Կաթոլիկ Եկեղեցու արք. Պաուլ Պեցցիի:

Ողջունելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ նրանց ներկայությունն ու աղոթքները ոչ միայն յուրահատուկ կերպով գործացնում են հայ ժողովրդին ու նրա հավատքը, այլեւ գալիս են միախառնվելու



9 ապրիլի

Ռումինիայի Խորհրդարանի ղազանավորների ղալափի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Վալերիու Շոեֆան Չոնեային:


Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական բարեկամական կապերին՝ նշելով, որ ռումին ժողովրդի խոր հավատքի, մարդասիրական ազնիվ ոգու շնորհիվ է, որ հայ ժողովրդի զավակները Ռումինիայում կարողացել են կերտել իրենց հոգեւոր մշակութային արժեքները, նշանակալի ներդրում ունենալ Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում եւ որպես եղբայրներ ապրել ռումին ժողովրդի կողքին: Վեհափառ Հայրապետն ընդգծեց նաեւ, որ երկու ժողովուրդների բարեկամության ակունքներում կանգնած է նաեւ Եկեղեցին: Իր հերթին Ռումինիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահը կարեւորեց երկու երկրների հարաբերությունների առավել ամրապնդումը՝ նշելով, որ պատմությունն ու մշակույթն արդեն իսկ մոտեցնում են երկու ժողովուրդներին: Վալերիու Շոեֆան Չոնեան անդրադարձավ նաեւ Եկեղեցու կարեւոր դերակատարությանը ժողովուրդների կյանքում խաղաղության հաստատման գործում:

Հանդիպմանը ներկա էին Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եղրաս Եպս Ներսիսյանը, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթև Եպս Հակոբյանը եւ Հայաստանում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կրիստա Ռոդիկա Պրունարիուն:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաեւ Բուխարեստի քաղաքապետ Սորին Միտչեա Օպրեսկուի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը նշեց, որ Ռումինիա կատարած երկու հովվապետական այցերի ընթացքում ակնատեսն է եղել այն ջերմության ու հարգանքի, որ ռումին ժողովուրդը տածում է հայ ժողովրդի զավակների նկատմամբ:

Չրույցի ընթացքում խոսվեց Ռումինիայի հայ համայնքի ազգային եւ եկեղեցական կյանքի, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների մասին: Ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց Ռումինիայի ժողովրդին՝ հայցելով, որ երկնավոր Տիրոջ օրհնությամբ միշտ խաղաղության ու բարօրության մեջ ապրեն Ռումինիան եւ իր հավատավոր ժողովուրդը: Հանդիպմանը ներկա էր Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթև Եպս Հակոբյանը:



ԵՆԻ հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տարեկան ժողովը Մայր Աթոռում

Ապրիլի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական հիմնադրամի տարեկան ժողովը, որին մասնակցում էին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնադրամի հետ համագործակցող թեմական-եկեղեցական կառույցների, հասարակական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկան Գեղարքունյաց թեմի առաջնորդ, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարկոս Եպս Հովհաննիսյանը եւ գործադիր տնօրեն ղոկտոր Կարեն Նազարյանը: Ժողովականներին ողջունեցին նաեւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ Եպս Մանուկյանը եւ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ար-

տակարգ եւ լիազոր դեսպան Ռայներ Մորելը:

ՀԿՍ տարեկան ժողովում ներկայացվում է բանախոսություն որեւէ ոլորտի վերաբերյալ: Այս ժողովին հրավիրված էր բանախոսելու ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Զոհարյանը, ով խոսեց «ՀՀ արտաքին քաղաքականության արդի մարտահրավերները» թեմայի շուրջ: ՀՀ ԱԳ փոխնախարարը պատասխանեց նաեւ ժողովականների հարցերին:


Այնուհետև ներկայացվեցին «Կլոր սեղանի» 2012-2013 թթ. ծրագրային եւ ֆինանսական հաշվետվությունները, որից հետո առանձին խմբերով տեղի ունեցան քննարկումներ՝ 2014-2015 թթ. հիմնադրամի գործունեության գերակա ուղղությունների ու անելիքների վերաբերյալ:

Տարեկան ժողովն ամփոփեցին ՀԿՍ գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը եւ հոգաբարձուների խորհրդի անդամ Վահրամ քնն. Մելիքյանը:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Հակոբ Շամախեցու հուղարկավորությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը ձեռնամուխ եղավ նոր կաթողիկոսի ընտրությանը: Դժվար եկան ընդհանուր համաձայնության, քանի որ չկար մեկը, որ բոլորի մտքերը գրաված լինեին իր ազդեցությամբ եւ եռանդուն գործունեությամբ: Նալյանը, որ մինչ այդ միշտ հրաժարվել էր, արդեն տկարացած ու անկարողունակ էր դարձել, ինչի մասին բոլորն էին խոսում: Հնարավոր թեկնածուներն էին Հովհան Ամդեցին՝ Գլակա առաջնորդը, Աբրահամ Աստապատցին՝ Չմյուռնիայի նվիրակը, Սամվել Երզնկացին՝ Պրուսայի առաջնորդը, եւ Հարություն Բասենցին, որը նախկին նվիրակ էր եղել, սակայն չորս




հավաքների ընթացքում նրանցից եւ ոչ մեկը հստակ մեծամասնություն չէր ստացել: Ավելորդ էր ասել, որ Սիմեոն Երեւանցու թեկնածության մասին խոսող էլ չկար: Նրա գործունեությունը հայտնի էր բոլորին, սակայն հախուռն բնավորությունը շատերի սրտով չէր, եւ կասկած կար, որ թուրքահայերին հաճելի չէր լինի: Սակայն հինգերորդ հավաքի ժամանակ, չգտնելով հարմար այլ թեկնածու, միաբանությունը վճիռը կայացրեց եւ նրա օգտին: Հայտնի է, որ Հարություն Բասենցին մեծապես նպաստել է դրան: Համաձայնությունը կայանալուց անմիջապես հետո՝ 1763 թվի ապրիլի 20-ին՝ Երեւանի խաչի կիրակի օրը, առանց սպասելու պոլսեցիների ու մյուսների համաձայնությանը՝ կատարվում է նրա օծումը: Վախ կար, որ կարող

էին նոր արգելքներ ծնվել: Միաժամանակ դրանով փաստի առաջ էին կանգնեցնում թուրքահայերին: Անտարակույս Սիմեոն Երեւանցին իր գործունեությամբ անծանոթ դեմք չէր, եւ պատմությունը ցույց տվեց, որ ընտրությունն առավել քան հաջող էր:

Ենթադրություն կա, որ նա ազնվական ծագում ուներ, սակայն նրա սերումը Պռուսիաներից կամ Խուբովներից ստուգման կարիք է գգում: Նա ծնվել էր Երեւանում՝ Կարապետի եւ Գայանեի ընտանիքում: Նրա եղբայրներն էին Մելքիսեդեկը, Հարությունը եւ Ղազարը: Ծննդյան թիվը հայտնի չէ, ըստ Մ. Օրմանյանի՝ մոտավորապես 1710 թվին: Մայր Աթոռի դպրոցում նա հենց սկզբից առանձնանում է իր ուշիմությամբ եւ ունակություններով: Կոլտոն անգամ ցանկություն է ունենում նրան իր կողմը գրավելու: Նա հանձնարարում է Սահակ Ահազինին՝ Էջմիածնում գտնվելու ժամանակ գայթակղել նրան: Սիմեոնն ավարտում է Էջմիածնի դպրոցը Շամախեցու ուսուցչության շրջանում, եւ անմիջապես ինքն էլ ուսուցչության է կոչվում եւ ուսուցանում Մայր Աթոռի շատ նշանավոր միաբանների, որոնք պարծանքով են այդ հիշել: Նա դեռ ընդամենը դպիր էր, երբ Հարություն Ջուղայեցի եպիսկոպոսի մոտ՝ Բայազետի նվիրակության օգնական նշանակվեց, եւ սարկավագ եղած ժամանակ պահանջվեց, որ նա Հնդկաստանի նվիրակ կարգվի, չնայած Ղազար Ջահկեցին հորդորում էր բարետես մարդ վերցնել, իսկ Երեւանցին այդպիսին չէր: Նա գեղեցիկ չէր, իսկ մորուքն էլ աղքատիկ էր, ինչի համար նա Բոշ մականունն էր ստացել (թուրքերեն՝ քյոսե, հայերեն՝ այծ): Հարություն Ջուղայեցին կամենում էր նրան քահանա ձեռնադրել 1743 թվի հաջվերացին (սեպտեմբերի 11-ին), սակայն դրանից երկու օր առաջ վաղաժամ վախճանվում է: Տեղական քահանաները մեղադրվում են Ջուղայեցուն թունավորելու մեջ, քանի որ Սիմեոնի ձեռնադրվելու դեպքում կզրկվեին սեփական օգուտից: Սիմեոնը, սարկավագ մնալով հանդերձ, շարունակեց նվիրակությունը՝ փոխարինելով եպիսկոպոսին, եւ երեքուկես տարի շրջագայեց Հնդկաստանում: Հետո նա, պտույտ կատարելով Ջուղայի կողմերում, 1747 թվին, երբ ընդդիմությունը Ղազար Ջահկեցու դեմ ուժեղացել էր, վերադարձավ Էջմիածին: Հնդկահայերը խնդրել էին, որ կաթողիկոսը Սիմեոնին վարդապետ ձեռնադրի եւ կր-

կին ուղարկի Հնդկաստան: Կաթողիկոսն անձամբ նրան ձեռնադրեց՝ հաշվի առնելով նրա արդյունավոր գործունեությունը, սակայն Հնդկաստան չուղարկեց: Սիմեոնը հայտնվեց Ղազար Ջահկեցու ընդդիմադիրների բանակում, եւ ինքն էր պատրաստում անհրաժեշտ տեղեկագրերն ու նամակները: 1748-ին նա նպաստեց Զյուլուրի կաթողիկոսանալուն: Հասկանալի է, որ երբ Ղազարը 1749-ին կրկին կաթողիկոսեց, Սիմեոնը հեռացավ Կարին՝ ապաստան փնտրելով այնտեղ: Ղազարը կամեցավ Երզրումի կամ Կարինի փաշայի օգնությամբ Սիմեոնին ձեռք գցել՝ կտրելու համար իր դեմ գրիչ շարժող երկու մատները, սակայն Սիմեոնը հեռացավ Կ. Պոլիս, որտեղ շնորհիվ իր ուսումնական հռչակի՝ արժանացավ փայլուն ընդունելության:


Սիմեոնը Կ. Պոլսում մնաց բավական երկար: Նա Բալթիկ Սբ Հրեշտակապետի եկեղեցու քարե խցում, որը կամարակապ սեյսյակ էր, մեծահասակ ունկնդիրների համար դասավանդում էր Պորփյուրի եւ Դավիթ Անհաղթի հայացքները: Հայտնի է, որ Ղազար Ջահկեցին մահացավ 1751 թվին, եւ նրանից վտանգ չկար, սակայն Սիմեոնը ետ չվերադարձավ՝ հուսալով առաջ գնալ իր հովանավոր Յաղոբ ամիրայի օգնությամբ: 1751 թվին նա ուղեկցեց նրան Երուսաղեմի ուխտավորության ժամանակ: Նա Նալյանին զարմացրեց ու հիացրեց իր քարոզչական հմուտ ատենաբանությամբ, որ Նալյանն անգամ իր փիլոնը, մատանին ու գավազանը նրան նվիրեց: Իսկ երբ ուխտավորները դիմեցին Նալյանին, որ հաղթանակում ու փարթամ մորուք ունեցող Մովսես վարդապետին իրավունք տա իրենց քարոզելու, նա Սիմեոնին ուղարկեց՝ պատճառաբանեց՝ ասելով. «Քարոզ կ'ուզեք՝ Զեօսես, մորուք կ'ուզեք՝ Մօսես»: Սիմեոնը Յաղոբ ամիրայի եւ Նալյանի հետ 1752-ին վերադարձավ Երուսաղեմից, սակայն Նալյանի վերստին պատրիարք դառնալուց ու Յաղոբ ամիրայի գլխավորելուց հետո թողեց Կ. Պոլիսը եւ 1754 թվի սկզբներին վերադարձավ Էջմիածին, թերեւս, ընկերանալով Ալեքսանդր Բյուզանդացուն: Շատ չանցած՝ 1755 թվի վերջերին, նա կրկին վերադարձավ Կ. Պոլիս՝ արդեն թե՛ որպես նվիրակ եւ թե՛ որպես կաթողիկոսի ընտրության պատգամավոր: Հակառակ նրա ջանքերին՝ 1756 թվականի փետրվարին կաթողիկոս ընտրվեց Սահակ Ահազինը: Վերջինս անվանական կաթողիկոսության շրջանում նա մնաց Կ. Պոլսում: Այդպես եղավ նաեւ Հակոբ Շամախեցու կաթողիկոսության շրջանում: Մի պահ եղավ Չմյուռնիայում, սակայն հայտնի չէ, թե ինչ պաշտոնով: Այս ընթացքում նա լավ ծանոթացավ թուրքահայերի գործերին, ինչպես երեւում է «Ջամբոջ» ու նրա նամակներից: Թերեւս, դա էլ պատճառ է



դարձել, որ նա հակակրանք ունենա Կ. Պոլսի պատրիարքության վերաբերյալ: Չնայած Մայր Աթոռի միաբանների վարանումներին՝ Սիմեոն Երեւանցու նվիրական գործունեությունը կարելու դեր կատարեց նրա՝ կաթողիկոս ընտրվելու հարցում: Ցավոք, նրա խոստացած «Յիշատակարանն» այդպես էլ մեջտեղ չէկավ, ուստի նրա նախընթաց գործունեության մասին տեղեկությունները կցկտուր են: Նույնիսկ Սահակ Ահազինին կաթողիկոսությունից վտարելու եւ Շամախեցուն կաթողիկոս ընտրելու ուղղությամբ թափված նրա ջանքերի մասին ոչ թե ինքն է գրել, այլ ուրիշները: Իսկ Սիմեոնը կաթողիկոսների մասին լույս համառոտ տեղեկություններ է տալիս: Նա Շամախեցուն համարում էր իր ուսուցիչը եւ հատուկ եկել էր Կ. Պոլսից՝ նրա օծմանը մասնակցելու: Սակայն օծումից հետո Շամախեցին նրան՝ որպես նվիրակ, ուղարկեց Կ. Պոլիս, որի համար նա, անկասկած, ամենահարմար թեկնածուն էր: Նա նվիրակությունն ավարտեց 1763-ին եւ վերադառնում էր Էջմիածին, երբ Կարնում պատահականորեն հայտնվեց Հակոբ Շամախեցու հուղարկավորության արարողություններում: Շատ չանցած՝ նա կաթողիկոս ընտրվեց եւ ապրիլի 20-ին էլ օծվեց:

Սիմեոնը հիմնալի գիտեր Կ. Պոլսի բարքերը եւ պոլսեցիների ցանկությունը՝ վճռական դեր խաղալ կաթողիկոսի ընտրության հարցում: Իսկ ինքն ընտրվել էր առանց նրանց համաձայնության, եւ օծումն էլ, իր կամքով, կատարվել էր շտապողականությամբ: Բայց նա լավ դիվանագետ էր, ուստի ամեն ինչ արեց, որ թուրքահայերը չգրգռվեն, եւ իր դիրքերը չխախտվեն: Սկզբում նա Երեւանի խանի ստացավ իր հաստատման հրովարտակը: Պատճառն այն էր, որ պարսկական արքունի իշխանությունը տկարացել էր, եւ խաները տեղերում վերածվել էին բացարձակ տիրակալների:

Շարունակությունը՝ էջ 4



BISHOP GEVORK SAROYAN

THE EUCHARIST
AS A LANGUAGE OF FORGIVENESS
AND RECONCILIATION

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել Մայր Աթոռի հոգեւոր կր-

ՆՈՐ հրատարակություններ

թական հաստատությունների վերատեսուչ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանի «Ս. Հաղորդությունը որպես ներման եւ հաշտության լեզու», «Մի երկնչի՛ր, բայց միայն հավատա՛» (Մարկ. Ե 36). Հայ Առաքելական Եկեղեցուն՝ ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ի հայեցակարգի առաջարկ» աշխատությունները:


Գեւորգ եպիսկոպոսն իր «Ս. Հաղորդությունը որպես ներման եւ հաշտության լեզու» (անգլերեն) գործում հանգամանորեն մեկնաբանում է Ս. Հաղորդության խորհուրդը Հայ Եկեղեցու ավանդության մեջ: Հայ իրականության մեջ այս գիրքն առաջին աշխատությունն է, որ Հաղորդության խորհուրդը դիտարկում է մարդկային հարաբերությունների համատեքստում եւ բարոյականության այն շրջանակներում, որում ժամանակակից հավատացյալներն ապրում են իրենց ամենօրյա հավատը: Գիրքը պարունակում է Հայ Եկեղեցու ավանդությանը բնորոշ առանձնահատկությունների արժեքավոր նկարագրություններ, որոնց բացահայտման ու բանաձեւման համար, բացի հայկական աղբյուրներից, օգտագործվել են նաեւ

ժամանակակից աստվածաբանական ուսումնասիրություններ եւ խորհրդածություններ:

Գիրքը հրատարակվել է Մայր Աթոռի բարերար Գաբրիել Չեմբերյանի հովանավորությամբ:

«Մի երկնչի՛ր, բայց միայն հավատա՛» (Մարկ. Ե 36). Հայ Առաքելական Եկեղեցուն՝ ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ի հայեցակարգի առաջարկ» գործում Գեւորգ սրբազանն անդրադառնում է 21-րդ դարասկզբում մարդկության առջեւ ծառացած մարտահրավերներից մեկի՝ ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ի աստվածաբանական եւ բարոյական տեսանկյունների: Գրքում ներկայացված է ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ի հայեցակարգի վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշումն արտահայտող ծրագիր, որտեղ կարելուքում է Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորի աշխատանքը՝ ՄԻԱՎ վարակ ունեցող մարդկանց եւ նրանց ընտանիքների հետ, ինչպես նաեւ ուրվագծվում են ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ի կանխարգելման գործում Հայ Եկեղեցու աշխատանքի ուղղությունները:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ





Ա. ԶԱՓԱԾՈՒ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24,
2013-ի թիվ 1-6

Սիրային քնարերգությունն ուշագրավ էջեր ունի նաեւ **Գ. Էմինի, Զ. Յովհաննիսյանի, Ռ. Դավոյանի** պոեզիայում: Եթե Էմինը կենցաղային իրավիճակների մեջ է փորձում գտնել սիրո խորհուրդը, այդ ընթացքում բանեցնելով թե՛ հեզանքի, թե՛ մտերմիկ ծաղրի գեղերը («Այս էլ քանի անգամ ասեմ», «Այս տարի այնպես սառնամանիք է», «Նա, ում սիրում ես», «Տխուր պատմություն», «Առանց բեզ» եւ այլն), ապա Զ. Յովհաննիսյանն այն պարունում է ռոմանտիկ շղարշով («Սերը», «Փոքրիկ իմ սեր», «Ի խորոց սրտի»): Ռ. Դավոյանի ժողովածուներում («Մեղրահաց», 1973, «Տաք սալեր», 1978, «Պղնձե վարդ», 1983) սերը պատկերված է ժամանակակից կյանքի հոգեբանական բարդ հանգույցների մեջ: Սերը ճշտվում-ճշգրտվում է բազմաթիվ սերերի մեջ եւ ապա ճշտում-ճշգրտում սիրո տեր մարդուն:

Սիրային պոեզիայում կանացի հոգեբանության նրբերանգներ բերեցին Ս. Կապուտիկյանը եւ Մ. Մարգարյանը:

Խոսուն տարերք կա **Կապուտիկյանի** սիրերգության մեջ, ինչը զգացմունքի եւ խոհի նրբերանգների պահպանումով ի հայտ է բերում հոգեկան ապրումների մի աշխարհ: Ամեն ինչ այդպես է այնքան ժամանակ, քանի դեռ յուրաքանչյուր տողի ե-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Հափաժո, արձակ, թատերգություն)

տեղում կանգնած է մարդու կենսագրությունը, որը նաեւ խտացում է ժամանակի հոգեւոր կենսագրության: Նախկինում գրած նրա սիրային բանաստեղծություններին ավելանում են նորերը, որոնք գետեղված են «Դեպի խորքը լեռան» (1972) եւ «Ձմեռ է գալիս» (1983) ժողովածուներում: Բանաստեղծուհին հնչեցնում է իրիկնային նվազներ, բռնկուն սիրո նախկին ոգեշունչ ապրումներին գալիս են փոխարինելու ավելի խաղաղ տողեր: Սերը դիտվում է ոչ միայն անհատի անձնական կյանքի մեջ, այլ՝ ազգային-հանրային կյանքի լայն ոլորտում: Անձնական սիրո վշտի կողքին բանաստեղծուհին տեսնում է ընդհանրապես կանացի դժվար կյանքի դրաման: Երիտասարդ տարիների բուռն ու վարար սիրո ապրումին գալիս է փոխարինելու խոհը: Ինքնաճանաչողությունը բերում է այն համոզման, որ կնոջ հավատարմությունը սիրո մեջ եղել է հպարտ ինքնագոհաբերում, որ կամային բնավորության տեր ուժեղ անհատը չի դարձել սոսկ կենցաղային կին, այլ մնացել է որպես ոգեղեն սիրո պահպանիչ եւ իր սիրո աշխարհից ճանապարհի հարթել դեպի մարդկային կյանքի մի մեծ աշխարհ («Վերջին երգերից»): Այստեղից սկսվում է ինքնագաղափարում, եւ հոգեկան ապրումների ցավը կարծես թե մեղմվում կամ խլանում է աշխարհի ավելի մեծ հոգսերի ներգործությամբ: «Մտերիմ երգ» բանաստեղծության մեջ կան այսպիսի տողեր. «Տեսա վիթխարի աշխարհի դեմ Ինչ փոքր է վիշտս, կարոտս, ես»: Սա այն ճանապարհն է, որ քնարական հերոսին ներքաշում է ավելի բարդ ու դժվարին հարաբերությունների մեջ: Անձնական սիրո նվազող տարերքի կողքին ավելի է հզորանում հայրենի երկրի սերը, իսկ նվիրումը լիովին հասցեագրվում է ժողովրդին («Անդորրություն», «Ընկերներս մեկիկ-մեկիկ կորան այս լայն ճամփաներին» եւ այլն): Միաժամանակ, այս տարիներին ավելի շեշտված է հնչում անցյալի հուշի մոտիվը («Մեզ չի միացնում այլեւս ներկան», «Անցած աշունը»):

Մ. Մարգարյանի սիրերգության մեջ կինը կերպավորվեց որպես սիրո մարմնացում: Սեր՝ ահա կնոջ միակ կոչումը՝ ըստ նրա զգայաչափի: Կին, որ շաղախված է «սիրանյութից» եւ դրված է «տարածության մեջ անսեր»): Այստեղից էլ սկսվում է քնարական հերոսուհու եւ աշխարհի հարաբերությունը: Մի կողմից՝ ռոմանտիկ տարերք, մյուս կողմից՝ կենցաղի մեջ մարդկային: Ռոմանտիկ տարերքի մեջ կինը ոգեղեն է երգի աստիճանի, որ այսպիսի բոցավառ պատկեր է ստեղծում («Երգը»):

*Դաշտով՝ մենակ, դաշտով՝ մերկ,
Հեռուներով անեղերը,
Չնայելով քարերին,
Մացառներին, փշերին՝
Վազում է լուռ մի աղջիկ՝
Ծիածանը փշերին:*

Ոգեղեն այս տարերքը կրակե շուրջպարի մեջ է առնում կնոջ, նրան նախ՝ դարձնում սիրո մարմնացում եւ ապա՝ «Դեռ չեմ պոկել...» բանաստեղծության մեջ քանդակում իբրեւ «կնոջ տեսք առած» աշխարհի կարոտ, թախիծ ու բարի սպիտակք:

Մարգարյանը եւս հնչեցնում է անցյալ օրերի սիրո հիշողության երգը եւ դրանով շերմացնում կյանքի ցրտաշունչ իրիկնաժամը:

Սիրո քնարերգությունն ինքնարտահայտման լայն հնարավորություններ բացեց ժամանակի պոեզիայում եւ մտերմիկ շունչ հաղորդեց բանաստեղծների քաղաքացիական շեշտվածությամբ բնութագրվող խոսքին:

1960-1980-ական թթ. հայ պոեզիան առանձնահատուկ ուշադրություն նվիրեց **հայրենասիրական** քնարերգությանը: Հայրենիքի ոգեկոչումը պատմության հին ու նոր էջերով, ժողովրդի անցած ճանապարհի հիշարժան դեպքերով այն խորհուրդն ուներ, որ ինքնագիտակցման էր բերվում դարերի փորձը, եւ ըստ այդմ՝ ճշտվում կյանքի ազգային կառուցվածքի բնույթը: Պատմությունը, ծննդավայրի ու հայրենի

տան կարոտը, հայրենիքի խորհրդանշանի վերածված մարդկային ճակատագրերը դարձան թե՛ մեծակտավ, համապատկերային երկերի նյութ եւ թե՛ առանձին շարքերի:

«Վարունքի պոեզիան» ուսումնասիրության մեջ, կարծես թե արձագանքելով «Հայ գրականության գալիք օրը» գեկուցման մեջ Վ. Տերյանի եւ «Մտքեր հայ գրականության մասին» հոդվածում Ա. Իսահակյանի արձարձած կարծիքներին, Պ. Սեւակը գրում էր. «... չմոռանալ, որ հայրենասիրությունը հայ գրողի մոտ հանդես է գալիս ոչ որպես սոսկական մի զգացում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսություն» (VI, 327): Այս աշխարհայացքն ու գաղափարախոսությունն ընկած են հայ գրականության, մասնավորապես՝ հայրենասիրական պոեզիայի հիմքում, որը միշտ էլ եղել է ժողովրդի պատմական ուղու անխառնախառն հայելին:

Այս տարիների հայրենասպասումի մեջ յուրաքանչյուր բանաստեղծ բերեց իր առանձնահատուկ շեշտը, ինչը եւ բազմազան ու հարուստ է դարձնում հայրենասիրական քնարերգությունը՝ հայ պոեզիայի մայր երակներից մեկը, որն ունի դարավոր ավանդույթներ:

Հ. Շիրազի հայրենագրությունն ունի ընդգրկման բավականին լայն ոլորտ՝ պատմական անցյալ, վերածնված Հայաստան, սփյուռքահայության ճակատագիր, հայոց լեզվի փառաբանում:

Պատմական անցյալը Շիրազը միշտ էլ ոգեկոչել է հանուն ներկայի՝ դրանով խորհրդանշելով ժողովրդի ուժն ու միասնությունը: Դրա վկայություններն են «Հայոց հրաշքը (Մեսրոպ Մաշտոց)», «Տիգրան Մեծի վիշտն ու հավերժությունը», «Մամիկոնյանի սուրը», «Արտավազդի ցասումը», «Անի», «Սպիտակ ձիավորը Փարիզում» պոեմները: Դրանք բնույթով ներքոյաններ են, որոնցում նա, հանձին Մեսրոպ Մաշտոցի, փառաբանում է հայոց գրերի գյուտը, վկայակոչում ժողովրդին միաբնության կոչող Տիգրան Մեծի եւ հայրենասեր գործիչների կյանքի դրվագները...

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆՆ Կ ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Հետո հարաբերություններ հաստատեց Կ. Պոլսի հետ: Իր օժուկից մեկ ամիս անց նվիրակներ ուղարկեց օսմանյան մայրաքաղաք. Հարություն Բասենցուն՝ Կ. Պոլիս, Մատթեոս Բյուզանդյանին՝ Գաղատիա, Գեորգ Դավանցուն՝ Դրիմ, եւ Պետրոս Գետնջեցուն՝ Կարին: Մայր Աթոռի միաբանության, Երեւանի, Թիֆլիսի ու Նախիջեւանի կողմից պաշտոնագրեր պատրաստվեցին Կ. Պոլսի եւ Չմյուռնիայի մեծավորներին, ինչպես նաեւ հանձնարարագրեր՝ կաթողիկոսի կողմից, որպեսզի թուրքահայերի հավանությունը ձեռք բերվի առանց դժվարության: Այդ նամակներն ուղարկվեցին Գրիգոր Սանահնեցի վարդապետի ձեռքով՝ ճանապարհ գնացող նվիրակների հետ: Պարզվում է, որ Սիմեոնը գրել է, թե իր կամքով չի օծվել կաթողիկոս, այլ՝ միաբանների ընտրությամբ: Սակայն դա շատ թույլ փաստարկ էր, ինչ-որ տեղ՝ Երեւանցու բնավորության անհարիր: Երբ ուղեւորները հեռացել էին Կարինից, Սանահնեցի

վարդապետը, մի պահ ետ մնալով ուղեւորներից, թալանվեց ավազակներից, որոնք կաթողիկոսի նամակները պատառոտեցին, իսկ սուրբ մեռնող վաճառեցին՝ իբրեւ ձեռք: Սանահնեցի պատռվածներից մի մասը հավաքեց եւ ուղարկեց Հարություն Բասենցի նվիրակին, որը գնում էր Եվդոկիա, իսկ ինքը ետ դարձավ: Սակայն Շամախեցու մահվան եւ Երեւանցու ընտրության լուրը, դեռ մինչեւ պաշտոնագրերը, հասել էր Կ. Պոլիս՝ առաջ բերելով ավազանու մի մասի ընդդիմությունը, քանի որ Սիմեոնն օծվել էր առանց իրենց համաձայնության: Իհարկե, ավազանու մեծ մասը համաձայնեց նրա ընտրությանը: Իսկ Նալյանը 1763 սեպտեմբերի 28-ին՝ Վարազա խաչի կիրակի օրը՝ պատարագի ժամանակ, հիշատակեց տիրապսակ Սիմեոնի անունը՝ առաջ բերելով բոլորի հավանությունը: Էջմիածին ուղարկվեցին շնորհավորական նամակներ ու պաշտոնագրեր, որոնք տեղ հասան դեկտեմբեր ամսին: Փաստորեն ուր ամիս տեւեց Սիմեոնի անհանգիստ կա-

ցությունը, որից հետո ձեռնամուխ եղավ իր բուռն գործունեությանը:

Սիմեոնի ընտրության եւ սկզբնական պաշտոնավարության շրջանում քաղաքական կացությունը խառնակ էր: Ընտրությունից երկու ամիս անց Երեւանի Հյուսիսային խանը, լուր առնելով Քերիմ խանի ավերիչ արշավանքի մասին, պատգամ է ուղարկում Սիմեոն Երեւանցուն, որ նա, թշնամու ձեռքը չընկնելու համար, ամբողջ հարստությամբ եւ պարենի բավականաչափ պաշարով գա ապաստանի Երեւանի բերդում: Խանը Սիմեոնին կասկածում էր Քերիմին օգնելու հնարավորության հարցում, իսկ Սիմեոնն էլ չէր կամենում նրա ձեռքը հանձնվել, ուստի մի ամսի չափ մնաց անորոշ կացության մեջ: Սակայն Վրաց Հերակ թագավորի միջամտությամբ Հյուսիս-Ալի խանը հրաժարվեց իր առաջարկից եւ համաձայնեց, որ միաբանները մնան Էջմիածնում, իսկ կաթողիկոսը մի քանի գլխավորներով անցնի օսմանյան տիրույթները, գնա Ուլքիխայի կամ Բազավա-



նի Սբ Յովհաննեսի վանքը, որը գտնվում էր Բագրեւանդ գավառում: Դա կաթողիկոսին մեծ ուրախություն պատճառեց: Նա 1763 թվի հուլիս ամսին անցավ Բայազետի փաշայություն, որտեղ էլ իմացավ Գրիգոր Սանահնեցու կողոպտվելու եւ պաշտոնագրերի ոչնչացվելու մասին: Նա նոր պաշտոնագրեր պատրաստեց եւ Պետրոս Գետնջեցուն հրահանգեց քայլեր ձեռնարկել թալանը վերադարձնելու համար: Այդ ժամանակ էլ Հյուսիս-Ալի խանից լուր ստացավ, թե երկիրը խաղաղվել է, եւ նա կարող է վերադառնալ: Սիմեոնն իր ուղեկիցներով գալիս է Բայազետ, Մահմուդ փաշայի կողմից հյուրընկալվում մի քանի օր, ապա սեպտեմբերի 20-ին

դուրս գալով Բայազետից՝ հաջորդ օրը հասնում Էջմիածին: Սեպտեմբերի 28-ին նա նոր պաշտոնագրերը սուրհանդակի միջոցով հասցնում է Հարություն Բասենցի նվիրակին, որը Եվդոկիայում էր: Սիմեոնը շտապում էր ստանալ թուրքահայերի հավանությունը, երբ այդ նույն օրը, բարեպաշտաբար, խնդրեց Կ. Պոլսում փակվել Էր: Կաթողիկոսը նույնիսկ հետաձգել էր խանի հետ պաշտոնական հանդիպումը՝ Կ. Պոլիս ուղարկված պաշտոնագրերի պատճառով: Նա միայն սեպտեմբերի 29-ին գնաց Երեւանի բերդ՝ խանին այցելության:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

ԿԻՑ սեմյակում

- Համաձայն Եկեղեցու սբ վարդապետների դասակարգման՝ «մարդկային» կոչված առաքինություններից 2-րդն արիությունն է: Ընդունված է ասել, որ արիությունը մարդու «բարկական», այսինքն՝ բարկանալու, զայրանալու ընդունակության առաքինությունն է, որը ենթարկվում է բանականությանը եւ բարձր լինելով մարդու ցանկություններից՝ իշխում է այդ ցանկությունների վրա: Արիության առաքինությամբ մարդն ասում է չարիքը եւ դրանով իսկ պաշտպանվում մեղսակից խորհուրդներից: Ըստ Եկեղեցու սբ հայրերի՝ արիության առաքինությունը ոչ թե եւ ոչ այնքան մարդու «արտաքին» քաջությունն է, խիզախ, համարձակ լինելու հատկությունը, որ դրսեւորվում է ծայրահեղ իրավիճակներում, այլ նախ եւ առաջ նրա մեջ եղած՝ մեղքերը հաղթահարելու վճռականությունը, դրանք վանելու քաջությունը եւ աստվածային պատվիրանները հավատարմորեն եւ ամուր պահելու ջանքերը: Ի՞նչ կասեք, տե՛ր հայր:

- Արիությունն այն առաքինությունն է, որը մղում է բարին իրագործելու: Իհարկե, այս առաքինությունն առավելապես դրսեւորվում եւ ավելի ճանաչելի է դառնում արտակարգ իրավի-

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար ԲՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ճակներում, կյանքի դժվարագույն հանգամանքներում, երբ առկա է, ասենք, կյանքը վտանգելու կամ որեւէ կարեւոր արժեք վտանգելու հանգամանքը, երբ այս կամ այն չափով առկա է ռիսկի գործոնը: Մյուս կողմից՝ սխալ պիտի լիներ մտածել, թե սովորական առօրեական կյանքում բարին հետեւողականորեն իրագործելու գործընթացից խաթմ բացակայում է արիության առաքինությունը:

Սբ Գրեցում արիության բազում օրինակներ կան: Սակայն արիության չգերազանցված օրինակը մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրինակն է: Լինելով Աստված եւ Աստծո Որդի՝ Նա «մարմնացավ, մարդացավ», նաեւ, հասարակ մարդկանց մեջ պարզ մի կյանքով ապրելուց բացի, կամավոր գնաց մահվան: Եվ Նա գիտեր՝ ուր է գնում: Արիության, հիբրավի, բացառիկ դրսեւորում էր սա. ունենալով աստվածային գորություն, աստվածային փառք, փառավորված լինելով քերովբեներից ու սերովբեներից՝ դարձավ մարդ ու պատրաստակամորեն գնաց դեպի խաչ: Գեթսեմանի պարտեզում աղոթելիս Քրիս-

տոս արյուն քրտնեց. հրեղեններից փառավորված Եուրյունը պատրաստվում էր լուտանքների, նախատիքների, փշե պսակի, հայիոյանքների, ծեծի արժանանալու եւ ի վերջո՝ խաչի վրա սպանվելու: Չափազանց դժվար է այս երկուսը (աստվածային փառքը եւ մարդկային տառապանքը) միմյանց հետ հաշտեցնելը, եւ սա էր պատճառն արյուն քրտնելու: Սակայն Քրիստոսն իրագործեց աստվածային ծրագիրը եւ իրագործեց հենց արիության շնորհիվ՝ հաղթահարելով մարդկային տկարությունն ու տաղանայնությունը: Գիբստի հայտնի ֆիլմում շատ հետաքրքիր է ներկայացվում Քրիստոսի չարչարանքների պահը. սատանան, հայտնվելով, Քրիստոսին ասում է. «Չես կարողանալու, մի՛ արա»: Եվ Քրիստոսն ասում է. «Ետե՛ս գնա, սատանա՛»: Իրականում աստված մի պայքար կար. իբրեւ մարդ՝ Նա չափազանց մեծ փորձությունների պիտի ենթարկվեր, իբրեւ կատարյալ մարդ՝ «կատարյալ» չարչարանքներ պիտի կրեր: Ու հենց այստեղ երեւում է Քրիստոսի կատարյալ արիությունը:

- Այդ արիությամբ, ինչպես Տերն է ասում, Ինքը հաղթեց աշխարհին: Հովհաննու Ավետարանում Գեթսեմանից առաջ, մատնությունից էլ առաջ, հիշո՛ւմ եք, տե՛ր հայր, երբ Հիսուսը քաջալերում է աշակերտներին այսպիսի խոսքերով. «Այստեղ՝ աշխարհում, նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետեւ ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33): Այսինքն՝ ես հաղթեցի մեղքին, եւ ուրեմն՝ արիացե՛ք, քաջալերվե՛ք, որպեսզի որքան էլ նեղություն ունենաք, դուք եւս Իմ օրինակով կարողանաք հաղթել չարին, մեղքերին: Կարե՛լի՝ եւ ասել, որ դա հենց արիության հորդոր էր:

- Գլխավոր հաղթանակը տարավ հենց Ինքը՝ Քրիստոսը, եւ այդ հաղթանակը տարածվելու էր բոլոր հավատացողների կյանքում: «Քաջալերվեցե՛ք» ասաց արդեն վախվորած առաքյալներին, ովքեր է՛լ ավելի պիտի մոլորվեին, երբ Հիսուսին տանեին Գողգոթա: Նույն այդ վախեցած մարդիկ, սակայն, շատ չանցած՝ «հանկարծ» պիտի դառնային կատարյալ արիներ ու երկրագնդով մեկ, առանց

վախի նշույլի, պիտի տարածեին Քրիստոսի լույսը: Նրանք բանարկում էին, բանտից դուրս էին գալիս, նորից գնում Քրիստոսի Ավետարանն էին քարոզում: Սա մինչ այդ չտեսնված մի արիություն էր՝ հողեղենների կողմից դրսեւորված, որով նրանք մահվանից այլեսս չէին վախենում: Նույն առաքյալների վախճանն արիության փայլուն օրինակ դարձավ սերունդների համար: Նրանցից երկուսն էլ մե՛ր հողի վրա նահատակվեցին՝ Թադեոսն ու Բարթողիմեոսը, ովքեր իրենց սուրբ արյունը հեղեցին եւ այդ արյամբ սրբացրին մեր հողը եւ կնքեցին Քրիստոսի հավատքի ճշմարտությունը:

Աստվածաշունչ Մատյանում մենք տեսնում ենք արիության բազմաթիվ այլ օրինակներ՝ մեկը մյուսից գերազանց: Համատարած պիղծ աշխարհի մեջ Նոյ նահապետն ապրում էր բարեպաշտությամբ. սա արդեն արիություն էր: Կամ Ղովտը՝ Սողոմ-Գոմորում: Դավիթ թագավորը, դեռ պատանի հովիվ, հսկա Գողիաթի դեմ դուրս եկավ եւ Աստծու անունով տապալեց իրեշին մի պարսատիկով: Գեղեցիկ մի փոքրիկ զորախմբով հսկայազոր բանակին հալածեց... Տեսնում ենք, որ բոլոր սրբերին բնորոշ գիծ է եղել արիությունը:

- Կարե՛լի՝ եւ ասել, որ քրիստոնյա մարդն ամենաարի, ամենաքաջ մարդն է իրականում:

- Միանշանակ՝ այո՛:

Շարունակությունը՝ էջ 6

ՆԱԵՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՅՈՒՆ



Մարտի 3-ին թեմակալ առաջնորդ Եզրաս սրբազանը Մոսկվայի Սբ Հարություն Եկեղեցում հանդիպեց մոսկվաբնակ Լիլիթ եւ Յուրի Հայրապետյաններ ամուսիններին, ովքեր եկեղեցուն նվիրեցին Ստեփան Մախասյանցի հայերեն բացատրական քառահատոր բառարանը՝ տպագրված 1944 թվականին: Իր հերթին ողջունելով եւ շնորհավորելով հյուրերին Ս. Չատիկի առիթով՝ սրբազան հայրն օրհնության եւ գնահատանքի խոսք ասաց եկեղեցասեր ամուսիններին, ովքեր իրենց հոգածու ուշադրության կենտրոնում են պահում Հայ Եկեղեցին եւ հայ մշակույթը, ամեն ջանք գործադրում աջակցելու համար:

Սա Լիլիթ եւ Յուրի Հայրապետյաններ ընտանիքի առաջին նվերն էր:

2013 թվականի հունվարի 19-ին նրանք նորակառույց Մայր Եկեղեցու թանգարանին նվիրեցին 1540-ի ձեռագիր մի Սաղմոսագիրք, որն առաջին անգամ տպվել է 1725-ին: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Հայրապետյանը պատմում է, որ ձեռագիրը ձեռք է բերել պատահական: Նախկին ուսանողուհու տանը նկատել է սեւ կազ-

մով, խունացած էջերով մի գիրք եւ հարցուփորձ արել: Պարզվել է, որ այն չնչին գումարով գնել է ուսանողուհու ամուսինը՝ Սիբիրում մի վաճառականից, ով պատկերացում անգամ չի ունեցել, թե ինչ գիրք է այն:

Գնահատելով գրքի կարեւորությունը՝ Լիլիթ Հայրապետյանն առաջարկում է վաճառել այն, ինչի դիմաց տալիս է իր թանկարժեք վերարկուն:

Շնորհիվ մեծազնիվ տիկին Լիլիթ Հայրապետյանի՝ այսօր ունեցե փրկված մի գանձ՝ Սաղմոսագիրք, որը շուտով ի տես կորվի Մոսկվայի Նորակառույց Եկեղեցական համալիրի թանգարանում՝ հուրախություն եւ ի սփոփանք բարեպաշտ հայ հավատացյալների:

Ի դեպ, Հայրապետյաններն անցյալ տարի եւս գեղեցիկ անակնկալ մատուցեցին՝ եկեղեցուն նվիրելով հայկական զարդանախշերով հին գորգ:

Հանդիպման ավարտին Եզրաս սրբազանը Հայրապետյան ամուսիններին նվիրեց փայտե խորհրդանշական զատկական ձու եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղադրված խաչքարի նմանությամբ պատրաստված արծաթե խաչ-հուշանվեր:

ՔԱԶԱԼԵՐՎԵՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՍ ՀԱՂԹԵՅԻ ԱՇԽԱՐԻՆ

Ապրիլի 7-ին Մոսկվայի հայորդյաց տանը տեղի ունեցավ երկու միջոցառում՝ նվիրված Ավետման, Մայրության ու գեղեցկության, նաեւ Ս. Հարության տոներին: Ցերեկային ժամին կենտրոնի հանդիսությունների սրահը փոքրիկների իշխանության ներքո էր, որտեղից անսպառ սիրո եւ գործանքի խոսքեր էին հնչում՝ ուղղված մայրերին, տատիկներին, ըույրերին ու մանկավարժներին: Ուսուցչուհի Ալվինա Հովհաննիսյանի սաները մեկ անգամ չէ, որ զարմացնում ու հիացնում են իրենց զրազետ խոսքով ու ճիշտ առոգանությամբ: Ակնառու էր նաեւ այն, որ գրեթե հայերեն չիմացող երեխաները բեմում անկաշկանդ արտասանում, երգում ու պարում էին:

Միջոցառման ավարտին ծնողների համար հաճելի անակնկալ էր երեխաների պատրաստած նկար-նվերները: Դրանցում ծնողներն էին՝ իրենց փոքրիկների աչքերով: Հիացմունքն ու հուզմունքը պատել էին ամենքին: Սրահում ջերմ խոսքերի ու շնորհավորանքների տարափ էր: Բոլորը շտապում էին լուսանկարվել եւ անմոռաց հիշողություն դարձնել եւս մեկ օր: Միայնակ նկատմամբ հարազատության այս զգացումները խորացնում ու ջերմացնում են ծնողմանկավարժ-երեխա հարաբերությունները, ամրապնդում ընտանիք-կրթօջախ-եկեղեցի կապը: Բեմից խոսել Աստվածածնի Ավետման խորհրդի մասին, սիրո խոսքեր շնայել մայրերին, տատիկներին ու ըույրերին. սա խոնարհումի, նաեւ դեպի աստվածանաչողության առաջին նախաքայլն է, որով երեխայի փխրուն ներաշխարհում զգվում են հոգեւոր գիտելիքի եւ հավատքի արթնացման առաջին սերմերը: Եթե այսօր այս երեխաները բեմում կանգնած խոսում են Աստվածածնի մասին, իսկ օրեր առաջ եկեղեցում իրենց ծնողների հետ տոնում Ս. Հարությունը եւ զատկական ծվերով խաղում, ավելի վաղ մասնակցում Ծաղկազարդին եւ «Օվսանա» Բարձրյալին՝ կանչում, երկյուղած սրտով սբ հորան բարձրանում՝ ոտնելվայի, կանգնում մկրտության ավազանի շուրջ եւ որդեգրվում Տիրոջը, ապա ակնհայտ է, որ Եկեղեցին իրենց մեջ

է, իսկ իրենք՝ Եկեղեցու իրական զավակները:

Խոր բովանդակությամբ եւ պատշաճ մատուցմամբ աննկարագրելի տպավորություն թողեց Սբ Հարության տոնին նվիրված միջոցառումը, որը կազմակերպել էին կենտրոնի բարձր տարիքի սաները:

Շատերը, այդ թվում՝ կենտրոնի հոգեւոր տեսուչ Առաքել քին. Ամիրյանն իր օրհնության խոսքում նկատեց, որ միջոցառումը յուրօրինակ էր մատուցման ձեւով եւ տարողունակությամբ:

Հնչում է Տիրոջ խոսքը՝ «Աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեք, որովհետեւ ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33):



Միջոցառման ավարտին տեր Առաքելը փխանցեց թեմակալ առաջնորդ Եզրաս սրբազանի օրհնությունն ու շնորհավորանքները՝ Ավետման տոնի առիթով, եւ գնահատանքի խոսք ասաց ուսուցիչներին՝ ջանադիր ու նվիրյալ աշխատանքի համար: «Չեր այսօրվա ելույթը վկայում է, թե ինչ խորությամբ եք ապրում ու գնահատում պատմական այն իրադարձությունները, որ տեղի ունեցան երկու հազար տարի առաջ, երբ խաչվեց մեր Տերը՝ հանուն մարդկության փրկության: Այսօր դուք, որպես հաղթանակած Տիրոջ զավակներ, ձեր կյանքով, գործով ու խոսքով վկայում եք, որ ապրում եք հարության լույսով եւ ձեր հոգում կրում եք խաչյալ Փրկչի պատվիրանները», - ասաց տեր հայրը:

Մոսկվայի հայորդյաց տան առաքելությունը ճշմարիտ քրիստոնյաների դաստիարակությունն է, որը, թերեւս, քայլ առ քայլ բարեհաջող իրականացվում է, սաների մեջ լիառատ սերմանվում քրիստոնեական արժեքները:

Ավարդ ՆԱՍՐԱՅԱՆ

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԻՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 5

- Ինչո՞ւ:

- Դրա համար պետք է ընդամենը վերլուծելով համեմատել քրիստոնեական արիությունը աշխարհական համարձակության հետ: Միանգամից արձանագրենք, որ վերջինս ավարտվում է գերեզմանով: Դրանից այն կողմ չկա ոչ մի գոյություն, ոչ մի միխթարություն: Աշխարհիկ մտածողությունը, հավանաբար «երկար փնտրություններից հետո», հանգել է մի հետեւության, այն է՝ «գործն է անմահ»: Մեր մեծ թուամայանն էլ ունի այս արտահայտությունը, բայց այն բոլորովին այլ համատեքստում է: Ինչեւէ, ասում են՝ անմահ գործ է թողել, լավ սերունդ է թողել, անուն, հեղինակություն... Անկասկած, այդ ամենը շատ կարեւոր է, եւ լավ է, որ մարդ իր մահից հետո բարի անուն է թողնում: Բայց... չէ՞ որ, ըստ աշխարհիկ մտածողության, բնաջնջվում է, կորչում, անհետանում: Ըստ այդմ՝ աշխարհական արիությունն էլ անիմաստ ու «հիմնագուրկ» արիություն է, քանզի իր մեջ չունի հավիտենական կյանքի հույսը: Գիտե՞ք, ոչ միայն արիությունը, բոլոր առաքինություններն էին ճնշվում մահվան երկյուղի առաջ: Որովհետեւ մինչեւ Քրիստոսի հարությունը գերեզմանից այն կողմ հույս չկար: Մինչդեռ քրիստոնեական արիության հիմքում Քրիստոսի հարությունն է, որով մահը պարտված է քրիստոնյայի համար: Նա գիտի, որ եթե այս աշխարհից ննջի էլ, գնալու է իր Տիրոջ մոտ, իր փառահեղ, իր ողորմած ու գթասիրտ, սիրող ու ներող Զոր՝ Քրիստոս Աստծու մոտ: Դրա համար էլ նա այս կյանքում արդեն ձգտում է հաճելի լինել Նրան ամեն ինչով, այդ թվում՝ իր ցասմական գործությունը եւ կարողությունները դեպի բարին ուղղորդելով: Սրան հակառակ՝ աշխարհիկ քաջությունը հաճախ է ի չարս գործադրվում: Տեսե՛ք, սատանան խնդիրներ է ստեղծում մարդկանց համար, իսկ մարդկանց հոգեւոր աչքերը բաց չեն՝ հասկանալու համար, որ բուն թշնամին հենց սատանան է, որ ուզում է թշնամացնել արյունակից ու մերձավոր հարազատներին, ընկերներին,


բարեկամներին: Եվ մարդն սկսում է ատել իր նմանին ու իր ցասմական ողջ գործությունը դնում է այդ ատելության մեջ՝ աշխատելով ամեն կերպ վնասել դիմացինին, պատրաստ՝ անգամ ոչնչացնելու ընկերոջը: Ատելության այսպիսի մոլավագքում ցուցաբերվող համարձակությունը կամ քաջությունը, ինչ անուն էլ որ տանք, զուրկ են մեռելների հարության հույսով «զգեստավորված» որակից, ինչի համար էլ չեն կարող առաքինություն կոչվել, որքան էլ նպատակն ազնիվ, միջոցն արդար եւ քաջությունն էլ «անմեղ» լինեն:

- Այսինքն՝ քաջությունը, առանց սեփական մեղքերը հաղթահարելու արիության, կարող է հակառակ՝ արդյունք ունենալ...

- Կարծում եմ՝ այս հարցի պատասխանը կարելի է տալ մի «դասական» օրինակով՝ շատ ծանոթ բոլորիս: Տղամարդը հայ ընտանիքում գլխավորն է, չէ՞: Ընդունված է, որ տղամարդը պետք է ղեկավարի ընտանիքը, եւ սա նորմալ է: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ տղամարդն իր ողջ ցասմական գործությունը «ներդնում է» իր իսկ ընտանիքի անդամների դեմ՝ իր իշխանությունը «հաստատելու» համար: Նա մոռանում է, սակայն, որ ինքը նախ եւ առաջ իր ընտանիքի խնամակալն է, որը պարտավոր է պաշտպանել ընտանիքը եւ պահել միության մեջ: Ո՛չ, նա մտածում է՝ «Ես տղամարդ եմ, ի՞մ խոսքը պետք է լինի»:

- Բայց այդտեղ արիության նշույլ իսկ չկա:

- Այո՛, բայց ես էլ հենց մոլորված մարդու մասին եմ խոսում: Եվ հետո՝ սա Ձեր հարցի պատասխանն է՝ հակառակ արդյունքի վերաբերյալ: Եվ ընդհանրապես, աշխարհիկ մտածողությունը միշտ էլ այս կամ այն չափով վարակված է եղել «ղեկավար» հասկացության թյուրըմբռնման ախտանիշով: Դեկավար ի՞նչ է նշանակում՝ ղեկը վարող, առաջ տանող, կառավարող, խնամող, պահապան, այդպես չէ՞: Եվ այս ամենն իրագործելու համար, իհարկե, արիություն է պետք: Իսկ ինչպե՞ս է հիմնականում ընկալվում այդ բառը մեր իրականության մեջ. ղեկավար, ասել է թե՛ իշխող, բռնակալ, իր կամքը թելադրող...



- Իսկ եթե մեկին հանիրազմի վիրավորում են...

- Իհարկե, յուրաքանչյուր նորմալ մարդ չի կարող անտարբեր նայել իր եւ իր մերձավորների արժանապատվությանը հասցված վիրավորանքին, առավել եւս՝ հանիրազմի վիրավորանքին: Բայց երբեմն այդ հակազդեցությունը մարդու մոտ վերածվում է մոլուցքի, ինչն էլ իր հերթին ծնում է հպարտություն, ամբարտավանություն ու գոռոզություն: Այսինքն՝ արիությունից հպարտություն ընդամենը մեկ քայլ է, որի սահմանը չի կարելի անցնել: Եվ առհասարակ, ցանկացած շնորհի կամ առաքինություն մեկ քայլով կարելի է վերածել մոլության եւ մեղքի: Կուզենայի կեղծ արիության եւս մեկ դրսեւորման մասին խոսել. շատ տարածված մի վիճակ է, երբ մարդիկ գլուխ են գոլում, թե կարող են, ասենք, մի քանի շիշ օղի, մի քանի արկղ զարեշուր խմել կամ օրական մի քանի տուփ ծխախոտ ծխել եւ այլն, էլ չեն ասում մի քանի հայրուր խինկալի ուտելու մասին: Ի՞նչ է ստացվում. մարդը, իր ամբողջ գործությունը ներդնելով, արեց դա: Բայց... ի վերջո ինչի՞ վրա ծախսեց իր գործությունը: Այնինչ կարող էր այդ գործությամբ առաքինի գործեր կատարել եւ ոչ թե մեղքերի մեջ խրվել:

- Իսկ ինչպե՞ս է հնարավոր ձեռք բերել ճշմարիտ քրիստոնեական արիությունը:

- Առհասարակ բոլոր առաքինությունների հիմքը սերն է առ Աստված, առ մերձավորը: Երբ որ սիրում ես Աստծուն, փափագ ես ունենում խոնարհվելու Նրա կամքի առաջ: Տեսե՛ք, մի կողմից՝ վախկոտությունը մեղք է, մյուս կողմից՝ մեղք է նաեւ արիությունը, համարձակությունը սխալ ուղղությամբ գործադրելը: Այս երկուսի պայմանական «միջնասահմանը» սիրով լցված արիությունն է, երբ մարդը, Աստծո առաջ խոնարհվելով, փնտրում է իր նմանի նկատմամբ բարիք գործելու ճիշտ ճանապարհը: Այստեղ էլ գործում է Ոսկե օրենքը. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ւք արեք նրանց» (Մատթ. Է 12): Եվ սա նույնպես ուղեցվում է արիությամբ:

- Տե՛ր հայր, արիության առաքինությունը որքանո՞վ է «ներկա» ապաշխարության խորհրդի իրականացման ժամանակ: Չղջման, մեղքերի թողության համար անհրաժե՞շտ է արիություն:

- Մերօրյա իրականության մեջ, ցավ ի սիրտ եմ ասում, ապաշխարությունը մեծ մասամբ արիություն է պահանջում: Այդպես չպետք է լինել, բայց... Թվում է՝ բոլորս ընդունում ենք Աստծու Եկեղեցին ու մեր սուրբ հավատքը՝ քրիստոնեությունը: Բայց փորձե՛ք մոտիկից հասկանալ այն հավատացյալ մարդու դրությունը, ով ամեն կիրակի գնում է Եկեղեցի եւ մասնակցում Պատարագին, ծունկի է գալիս, մեղա է ասում եւ ջանում առաքինությամբ ապրել: Գիտե՞ք, որ շրջապատի կողմից շատ մեծ ճնշում կա այդ մարդու վրա: Շատերը խենթի տեղ են դնում: Իսկ ոմանք անգամ դիվաբար հեգնում են: Այդ հեգնողներին ուզում եմ ասել, որ գալու է օրը, երբ Աստծու կողմից իրենք են հեգնանքի արժանանալու: Մարդը դեմքով է շրջվել դեպի Աստված, ոգեւորվել է, ուզում է քայլ անել, իր հավատքի ընթացքի մեջ աճել եւ հանկարծ՝ ինչ-որ մեկի հեգնախառն-հարցական հայացքը, հեգնախառն ժպիտը, ակնարկը... Եվ այդ ինչ-որ մեկը տվյալ անձի համար հեղինակություն է (թաղային կամ աշխատանքային, անգամ՝ ծնող): Նման «մանր-մունր» հեղինակություններին կուզենայի եղբայրաբար զգուշացնել, որ դրա համար իրենք երբեւէ պատասխան են տալու Տիրոջ առաջ: Մի՞թե վատ է, երբ մարդը գնում է Եկեղեցի, մասնակցում է Պատարագին, աղոթում:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 4

Պատմական անուններից եւ պատմության առանձին դեպքերից Շիրազն ածանցում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի փիլիսոփայությունը, որը մաքառման դժվարին ճանապարհն է: Այդպիսի խորհրդածական բնույթ ունեն «Երգ Զայաստանի (պատմության բավիղներով)», «Զայոց ճակատագիրը» պոեմները:

Ազգային ինքնաճանաչողության մեջ Շիրազն իր ժողովրդին բնավ չի մեկուսացնում մյուս ժողովուրդներից: Դա պարզորոշ երեւում է 1915 թ. եղեռնի առիթով գրված երկերում, որոնց մեջ դատապարտում է ազգասպանությունը եւ այն համարում հողազնի «մեղքերի մեղքը»: Այս կյուբին

ՉԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

են նվիրված «Զայոց դանթեական» լայնաշունչ պոեմը, «Մեծ եղեռնի հուշարձանի առաջ», «Չանգ ոգեկոչման», «Մեծ եղեռն» բանաստեղծությունները: Դրանք ընդհանրապես բողոքի ձայն են ժողովուրդների վրա բռնացող ուժերի դեմ, որ ավելի են սրվում որոշակի փաստի՝ 1915 թ. Մեծ եղեռնի հիշատակումով:

Ժողովրդի պատմական ճակատագրի մեջ Շիրազն առանձնահատուկ տեղ է վերապահում լեզվին: Լեզուն հայրենիք է, ժողովուրդների հարատւությունն ուժ: Այս կյուբով Շիրազը գրել է բազմաթիվ բանաստեղծություններ («Զայոց լեզվին», «Ուղերձ իղձերիս», «Խոսք մեծախորհուրդ պատգամի») եւ ստեղծել «Զայոց լեզվապատում» շարքը:

Շիրազի հայրենասիրական բանաստեղծությունների հիմքը ժողովրդի նորօրյա վերածնունդն է, ստեղծարար առօրյան: «Բանաստեղծի բողոքը» պոեմում, «Զայոց վիշտը», «Երեւան» բանաստեղծություններում նա արծարծում է հայրենիքի կենդանի կյանքը պատկերելու տեսական ծրագիրը եւ հանգում այն եզրակացության, որ հայրենիքի ներկան չպետք է կտրել անցյալից եւ կորցնել ժամանակների կապի միասնական զգացողությունը:

Շիրազի այս բնույթի բազմա-

թիվ ու բազմատեսակ գործերն ունեն քաղաքացիական բաց շեշտ: Ընդ որում՝ նա հաջողությամբ կարողացավ իր ասելիքը, նոր ժամանակների նոր խոսքը պատշաճորեն համադրել ազգային ավանդույթների եւ հենց խոսքի քաղաքացիական հնչեղությամբ զգոն պահել յուրաքանչյուրի վերաբերմունքը հայրենիքի, ժողովրդի պատմության, նրա լեզվի ու ստեղծագործ հանճարի հանդեպ:

Դ. Կարունասին պոեզիային տված **Պ. Մեւակի** վերը նշված բնութագրությունը նույնությամբ կիրառելի է եւ իր համար: Զայրենիքի գեղարվեստական կերպարն ստեղծելու գաղափարը բանաստեղծին համակել է գրական առաջին իսկ փորձերից սկսած, երբ նա, դեռ եւս յոթ-ութերորդ դասարանի աշակերտ, ջանացել է չափածո շարադրել հայ ժողովրդի պատմությունը եւ հասել մինչեւ համապատկերային ու բազմաձայն «Անլուելի զանգա-թառն» (1959) պոեմը: Այդ ընթացքում եւ հետո նա գրել է նաեւ «Սովետական իմ Զայաստան», «Ծուխ ծխանի», «Զարկ հոգեկան» շարքերը, «Խոսք հավաստիքի», «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմները: Սեփական ստեղծագործության այս ամուր հիմքի վրա բարձրացան նաեւ

նրա հայրենասիրական նոր գործերը՝ «Եռաձայն պատարագ» պոեմը, «Զայաստան», «Մինչեւ անգամ», «Զիչ ենք, բայց հայ ենք», «Զայոց լեզուն», «Վահագնին», «Զայուհիները», «Զայրենիք» բանաստեղծությունները:

Ամեն ինչի սկիզբը երդում-հավաստիացում-նվիրումն է: Ու թեեւ Պ. Մեւակը դրա կարիքն ամենեւին չունեւ, որովհետեւ նախորդ շրջանի գործերով նվաճել էր ժողովրդի վստահությունը, բայց եւ առիթը բաց չի թողնում վերստին արտահայտելու իր սերը: Ահա «Զայրենիք» բանաստեղծության սկիզբը.

*Զեզնով երդվելիս
Ձեռքըս դնում եմ իմ սրտի վրա՝
Սեղմելու նման,
Որ հանկարծակի չգայթի դողից...
Ինձնով երդվելիս՝
Ափսս դնում եմ քո մի ափ հողին...*

Այս բնույթի գործերում (ավելացնենք էլ «Երգ եռաձայն» բանաստեղծությունը) Մեւակը միաձուլում է ժողովրդի պատմությունը եւ ժողովրդի անունից խոսող բանաստեղծին:

Ազգային կյանքի բախտորոշ շրջանները խորհրդանշող պատմական անձնավորությունների՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Կոմիտասի գեղարվեստական կերպարներն ստեղծելուց եւ նրանց ճակա-

տագրի մեջ ազգային կյանքի խորհուրդը բեկելուց հետո «Եռաձայն պատարագ» պոեմում Սեւակն անցնում է պատմական որոշակի իրադաժությունների (1915 թ. Մեծ եղեռնի) ոգեկոչումից բխող լայն ընդհանրացումների: Բանաստեղծն իր ժողովրդի անցած ուղին դիտում է համաշխարհային պատմության տեսադաշտում եւ իր ժողովրդի ու համայն մարդկության գլխին եկած աղետները վերհիշելով՝ ասում.


*Հին Չանգըրից իր սկիզբն
առավ Բուխենվալդը Նոր,
Օսվենցիմների սկիզբը դրվեց
Դեր-Չորում միայն
Մայրանեկները
Չհարեթներում հիմնադրվեցին,
Դախաունեղը Ենկյուրիներում,
Ռաքքաուն, Բաբուն...*

Պոեմն սկսվում է զանգերի պատկերով: Կարծես շարունակվում է «Անլուելի զանգակատան» մտահղացումը: Բայց եթե այնտեղ զանգակատունը, հանձին Կոմիտասի եւ նրա երգի, մշտահունչ էր, ապա այստեղ զանգակատան զանգերը լուռ են՝ լռանակողի հիշեցնող մեծ ու փոքր Արարատների պատկերով: Այստեղ, ահա, բանաստեղծն է դառնում այդ վիթխարի զանգերի զգայարանը եւ բառերի վերածում դրանց լուռ ղողանջները:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

«Խորհրդավոր ընթրիքի» մեկնությունները 19-21 դդ. գեղանկարչության մեջ



Ալբրեխտ Դյուրեր

«Խորհրդավոր ընթրիքի» թե՛ բյուզանդա-իտալական եւ թե՛ հայկական մանրանկարչական կառուցվածքային լուծումները, որոնք հիմնականում պայմանավորված էին սեղանների ուղղանկյուն կամ էլիպսաձեւ պատկերումներով եւ սեղանների ձեւերից կախված՝ Տիրոջ ու առաքյալների ֆիգուրների տեղաբաշխմամբ, միջնադարյան Եվրոպայի պրոֆեսիոնալ նկարիչների գործերում էական փոփոխություններ չկրեցին, կառուցվածքային նոր մտահղացումներ, ըստ էության, չունեցան։ Այս նկարիչների թե՛ գրաֆիկական (փորագրություն) եւ թե՛ գեղանկարչական գործերում հիմնականում պահպանվեցին հարազատությունը ավետարանիչներից որեւէ մեկի թողած նկարագրության-տեղեկությանը։ Եթե մանրանկարիչների կոմպոզիցիոն լուծումները, կերպարների բաշխվածության սխեման, սեղանին դրվելիք պարագաները միտված էին ընդգծելու սյուժեի ծիսական-աստվածաբանական ենթատեքստը՝ որոշակի տարբե-

րակում մտցնելով հրեական գաղական ընթրիքի եւ Տիրոջ վերջին ընթրիքի խորհրդանշանների միջեւ, ապա գեղանկարիչները փորձեցին գեղանկարի կամ գրաֆիկայի լեզվով վերարտադրել հրեական գաղական սեղանը՝ կենտրոնում՝ ափսեի մեջ, պատկերելով ոչ թե ձուկ կամ ձկներ, այլ գառան գլուխ, հաճախ գլխամասի հետ նաեւ որոշ մնացորդներ։ Այս տարբերության պատճառը թերեւս այն էր, որ մանրանկարիչներին ավելի շատ հետաքրքրում էր Տիրոջ վերջին ընթրիքի ժամանակ կատարված անցքերից ոչ այնքան Յուդայի մատուռային, որքան Ռոմիկայի եւ Հաղորդության սրբազան խորհուրդների

հաստատումը, եւ Տիրոջ խորհրդանշանի ընդգծված պատկերումով փորձում էին շեշտել Ձկան՝ որպէս Գառան գոհաբերումը։

Սակայն պրոֆեսիոնալ գեղանկարիչներին ու գրաֆիկներին՝ որպէս ստեղծագործական խթան, առավելապէս հետաքրքրել էր Յուդայի մատուռային փաստը, երեւոյթը, որը խիստ բնորոշ է բոլոր ժամանակներին եւ մարդկային բոլոր միջավայրերին, մարդկային բոլոր հարաբերություններին՝ ընտանեկան, ընկերային, հասարակական, քաղաքական ու կրոնական։

Ըստ նկարիչների պատկերացումների եւ պատմական ժամանակաշրջանի ուսումնասիրությունների՝ սյուժե ներմուծվեցին

կոմպոզիցիոն ալյախսի մանրամասներ, ինչպիսին Վերնատան ներքին՝ ենթադրյալ կառուցվածքն էր, կահ-կարասին, գործող անձանց դիմագծերն ու ժեստերը, հագուստները, հաճախ նաեւ՝ բնության դրվագները, որոնք նշմարվում են պատուհաններից։ Անհատականացվեցին աշակերտների կերպարները՝ ավետարանիչների հաղորդած բնութագրական գծերով, նրանց արարքների եւ դրսեւորումների տարակերպությամբ, երբեմն կոմպոզիցիա ներմուծվեցին նաեւ կողմնակի գործող անձանց կերպարներ՝ ապահովելով հավաստի ու կենդանի հոգեբանական այն ողջ մթնոլորտը, որում ընթանում էին գործողությունները։ Ստեղծվեցին կերպավորման նոր հնարներ ու սիմվոլիկ ատրիբուտներ, ինչպէս օրի-



Ջիոտտո

նակ՝ Յուդային քսակով կամ կիսադեմ պատկերելը, Յովհաննէսին՝ նրբակազմ ու գեղեցիկ, Պետրոսին՝ ավելի տարեց ու ագիցիկ եւ այլն։

Երբ փորձում եւ ուսումնասիրել 13-14-րդ դարերից առ այսօր ստեղծված «Խորհրդավոր ընթրիքի» գեղանկարչական ու գրաֆիկական մարմնավորումները, ակնհայտ է դառնում, որ իսկապէս նկարիչներին առավելապէս հուզել է Ընթրիքի դրամատիկական գլխավոր պահերից մեկի՝ Յուդայի մատուռային հանգամանքը։ Այսինքն՝ Ընթրիքի ծիսակրոնական ըմբռնումը՝ Հաղորդության եւ Ռոմիկայի խորհուրդների հաստատման՝ Եկեղեցու համար հույժ կարեւոր սյուժեներն սկսել են հետզհետեւ իրենց տեղը գիշել մատուռային, դավաճանության պատմական իրողությանը։ Պատճառը,

թերեւս, ոչ միայն մարդկային հարաբերություններում այս երեւոյթների առավել հաճախ դրսեւորվելն է կամ սրանց՝ մարդկային բնությանն առավել բնորոշ ու միաժամանակ խոտելի լինելը, այլեւ Ընթրիքի սյուժեից բխող չարի ու բարու, լույսի եւ խավարի տիեզերական ենթաշերտերը, դրանց

Վերջին շրջանում շատ է խոսվում Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքը» սքանչելի որմնանկարի մասին։ Մտացածին ու երեւակայական վերագրումների կողքին ասես մոռանում ենք հանճարեղ այս նկարչի նույնքան հանճարեղորեն կատարված «Խորհրդավոր ընթրիքի» կերպավորման գեղարվեստական լուծումների, կերպարների, այն է՝ Քրիստոսի եւ առաքյալներից յուրաքանչյուրի հոգեբանական վիճակների, դրսեւորումների արտահայտման զար-



Ռաֆայել Սաստի

պայքարի, բախումների թե՛ քաղաքական, թե՛ սոցիալական եւ թե՛ փիլիսոփայական խնդիրը եւ այդ խնդրի սուբյեկտիվ եւ հնարավորինս օբյեկտիվ մեկնաբանումը։ Վերածննդի շրջանի շատ ու շատ նշանավոր նկարիչներ (Ջիոտտո, Կաստանո, Գիրլանդայո, Ռուելլի, Ռաֆայել, Ռուբենս, Տիտորետո, Վերոնէզ, Պուսսին եւ այլք) մեծապէս կարեւորել են հիմնականում ավետարանական պատմի պատմաբարոյական, հոգեբանական առանցքը՝ իրենց ժամանակաշրջաններին բնորոշ կերպավորման մեթոդներով, գեղարվեստական հնարներով, կենցաղային ատրիբուտներով, թեմայի՝ իրենց աշխարհընկալմանը հարազատ արտահայտչամիջոցներով։

մանալի խորքայնությունը, շարժումների, ժեստերի սքանչելի դիմափական, կերպարների երեքական խմբավորումների արտաքին դրվածքի ներքին փոխկապվածությունը ընդհանուր պատկերի մեջ, որտեղ մեկ հարթության վրա թեւածում են զարմանքը, տարակուսանքը, երկյուղը, անհանգստությունը, վիշտն ու սարսափը։ Եվ այս խառը զգացումների կենտրոնում նստած է Ինքը՝ Մեծն Խաղաղությունը, Արդարությունը, Ամմեղությունը։ Անշուշտ, Լեոնարդոյի գործում չկան «Խորհրդավոր ընթրիքի» ծիսակրոնական կամ աստվածաբանական խորհրդապաշտական ընկալումները։

Շարունակությունը՝ էջ 8



Լեոնարդո դա Վինչի



Յակոբո Բասսան

ՎԵՈՒ ՎԼԻ ՎԼ-ՄՈՒԿԱՍՄԻՆ ՍԹ ԹՎԵԿԻՆԻ (940-994)

ՊԱՏՈՒՄՆԵՐ ՃԱՏՐԱԿ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ահա թե ինչ պատմեց հայրս.
- Աբու Իբրահիմ անունով մի անտիոքացի իմ ընկերն էր եւ ծառայում էր հորս մոտ, իսկ հետո՝ ինձ մոտ։ Խիստ սիրահար էր ճատրակախաղի, ուղղակի հրաշքներ էր գործում։ Երբեմն նա խաղում էր իմ ծառաների հետ՝ գետնին ծունկի իջած, այնպէս, որ եթե մեկը հետեւից մոտենար ու նրա ուսին բարձեր դներ, ասես չէր նկատում, մինչեւ որ ավարտեր խաղը։ Այնժամ բարձերը մի կողմ էր նետում եւ կշտամբում ծառաներին։

Հայրս դրան հավելեց այսպիսի պատմություն.

- Մի անգամ ես գնացի ընկերոջս այցելության, որ նույնպէս տարված էր ճատրակով։ Արդեն երեկոյան աղոթքի պահն էր, եւ նա ինձ խնդրեց մնալ իր մոտ, որպէսզի կարենանք ճատրակ խաղալ ու գրուցել։ Հրաժարվեցի։ Այնժամ նա առաջարկեց՝ նախ աղոթեք, հետո մեկ-երկու անգամ խաղանք, մինչեւ գիշերային աղոթքը։ Մենք աղոթեցինք, ապա նա բերեց կանթեղը, սկսեցինք խաղալ եւ այնպէս տարվեցինք դրանով, որ չնկատեցինք՝ ինչպէս

անցավ գիշերը, այնքան, որ սաստիկ հոգնություն զգացինք։ Եվ լսեցինք աղոթականչ։ Ես նրան ասցի. «Աղոթքի ես կանչում, իմ գնալու ժամն է»։

Նա ձայն տվեց ծառաներին, բայց նրանք չէին արձագանքում։ Այնժամ նա ինձ հետ ելավ, արթնացրեց նրանց, որպէսզի նրանք ընթանան իմ առջեւից։ Երբ տնից դուրս ելանք, հասկացանք, որ կանչում էին առավոտյան աղոթքի, եւ որ մենք չէինք նկատել՝ ինչպէս անցավ գիշերը։

Այդ մարդն այնպէս էր տարված խաղով, որ իմ հանդիմանու-

թյանը պատասխանեց. «Ես կրքոտ խաղամոլ չեմ։ Խաղամոլը նույնիսկ մահվան մահճում, երբ իրեն առաջարկում են ասել՝ «Աստված չիք ալլահից բացի», կպատասխանի՝ «Զեզ շա՛խ։ Նավակը հանգիստ թող»։

Ես նրան պատասխանեցի. «Այդպիսի խաղացող ես չգիտեմ, ինչպէս դու ես։ Ըստ երեւոյթին չես հանգստանա, մինչեւ ինքը դառնաս այդպիսին, որ ասացիր»։

Նա պնդում էր, որ ճատրակը շատ օգտակար խաղ է, քանի որ սովորեցնում է մարտարվեստ, հղկում է միտքը, վարժեցնում է մտածելու եւ սովորեցնում է կանխատեսել։ Բավարար կլինեւ եւ այն, որ հատուկ է ճատրակին, ուրիշ ոչ մի բանի. ամբողջ մարդկությունը խաղում է այդ խաղը հազարամյակներով, բայց ոչ մի խաղարկում չի կրկնվում նույնությամբ։

ՈՒՂՂՈՒՄ

Թերթի փետրվար Բ համարի 7-րդ էջում «Հայոց ցեղասպանության դրդապատճառների լուսաբանումը ամերիկյան գրականության մեջ» հոդվածում տպագրվել է. «... Թուրքիայի արտգործ նախարար Թալատ փաշայի...»։

Պետք է լինի. «... Թուրքիայի ներքին գործոց նախարար Թալատ փաշայի...»։

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը։

«Խորհրդավոր ընթերիքի» մեկնությունները 19-21 դդ. գեղանկարչության մեջ



Սկիզբը՝ էջ 7

Ուստի պատահական չէ, որ ռուս հոգեւորական, աստվածաբան, փիլիսոփա, ֆիզիկոս, մաթեմատիկոս, գյուտարար Պավել Ֆլորենսկին, ում իրավագիտորեն կոչում են «ռուսական Լեոնարդո», մեծ իտալացու «Խորհրդավոր ընթերիքի» կոմպոզիցիոն լուծման՝ բեմադրվածքի մասին գրում է. «Այն ավելին չէ, քան սենյակի տարածության շարունակությունը... մենք տեսնում ենք ոչ թե իրականությունը, այլ տեսողական մի ֆենոմեն, եւ նայում ենք ասես անկիրք, բայց հետաքրքիր մի ճեղքից, որը ո՛չ ակնածանք ունի, ո՛չ կարեկցանք եւ առավել եւս՝ բաժանման պաթոս»։ Անշուշտ, Ֆլորենսկին յուրովի ճշմարիտ է, եթե մտածենք, որ Լեոնարդոն պատկերել է այն Ընթերիքը, որ հրեաների զատկական տոնին պատրաստել էր տվել Տերը՝ որպես հրաժեշտի ընթերիք եւ որպես սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման առիթ։

Պատմական կոչվող «Խորհրդավոր ընթերիքի» ավանդական կառուցվածքային, առաքյալների քանակի, նրանց սեղանի շուրջը բաշխելու, սեղանների կերպերի եւ այլ ատրիբուտների լուծումները հիմնականում պահպանվել են ոչ միայն Վերածննդի, այլեւ հետվերածննդյան շրջանում։ Սակայն հետագայում առավելապես 19-21-րդ դարերի գեղանկարչության մեջ դրանք արդեն կորցրել են, կարծես, իրենց իմաստն ու նշանակությունը. առաքյալների թվաքանակը, սեղաններն ու խորհրդանշական

կերակրատեսակները դարձել են երկրորդական ատրիբուտ՝ իրենց տեղը զիջելով նոր խորհրդանշաններին, թեմայի մեկնաբանման նոր ու հաճախ անսպասելի լուծումներին, նոր գաղափարախոսություններին ու ուսմունքներին, բնականաբար նաեւ՝ համապատասխան կերպավորման ձեւերին։

Տիրոջ վերջին ընթերիքի սյուժեն հիմք է հանդիսացել շատ ու շատ նկարիչների համար՝ արտահայտելու իրենց վերաբերմունքը հասարակական ու քաղաքական, կուսակցական, կլանային, ռազմական, բնապահպանական, մարդկային տարաբնույթ խմբավորումների մուգ ու խոտելի երեւոյթներին ու խնդիրներին։ Ցավոք, երբեմն գռեհկացվել է նաեւ թեման։

19-րդ դարի ռուս նկարիչ Նիկոլայ Գեն ավետարանական, կրոնական նյութն օգտագործել է որպես իր ժամանակի բարոյափիլիսոփայական մթնոլորտի բացահայտման բանալի՝ վեր հանելու



Սկիզբը՝ էջ 8

համար անհատի պատասխանատվության կարեւորությունը՝ միջավայրի, մերձավորների եւ այն մարդկանց հանդեպ, ովքեր ինչ-ինչ չափով ապավինում են նրան։ Ուստի պատահական չէ, որ Գեն որպէս Քրիստոս նկարել է Ալեքսանդր Գերցենի գլուխը, ով իր հայացքների համար վտարվել էր Ռուսաստանից։ Ուսուցչի եւ աշակերտների բաժանման ավետարանական ծանր հոգեվիճակը թելադրել է Գենն անդրադառնալ իր ժամանակի ռուս նշանավոր երկու մտածողների՝ Գերցենի եւ Տիմոֆեյ Գրանովսկու գաղափարական տարածայնություններին, դրանց պատճառով նախկին մտերմության խզմանը, որն անկասկած երկուսի համար էր խիստ ծանր էր։

Այս կտավի կոմպոզիցիոն լուծումն ավանդական «Խորհրդավոր ընթերիքի» կառուցվածքի հետ ոչ մի ընդհանրություն չունի։ Թախտիկ, որի գլխավորման մասում սեղանն է՝ վրան գինու շիշը, գավաթներ ու ձուկ, թիկնած է Հիսուսը՝ գլուխը հենած ձեռնափին։ Նա խիստ մտախոհ է ու թախծոտ, շուրջը առաքյալներն են. Պետրոսը՝ սեղանի մոտ կանգնած, իսկ Հովհաննեսը՝ Տիրոջ ոտքերի մոտ, մաքցալ աշակերտները պատկերված են սեղանի շուրջը նստած։ Տիրոջից քիչ հեռու եւ դեմ-դիմաց՝ աջ անկյունում, վեհորեն կանգնած է Հովհաննէս՝ ասես պահելով կոմպոզիցիայի հավասարակշռությունը, այս դեպքում նաեւ՝ անհատականությունների հավասարազորությունը։ Բոլոր առաքյալների հարցական հայացքներն ուղղված են դեպի Հովհաննէս։ Գենի «Խորհրդավոր ընթերիքը» խոսում է երկու լուսավոր անհատականությունների, երկու մտերմների՝ ժամանակի ու

հասարակության հանդեպ ունեցած իրարամերժ բարոյափիլիսոփայական պատասխանատվության մասին։

Հետաքրքիր է նաեւ Սալվադոր Դալիի «Խորհրդավոր ընթերիքը»։ Նկարչին հուզել է առավելապես սյուժեի ոչ միայն խորհրդապաշտական-կրոնական եկթաւտեքստը, այլն է՝ Հաղորդության հաստատման խորհուրդը, այլեւ լիովին չգիտակցված բաժանման ու կորստի ցավը, որին մասնակից է նաեւ ողջ տիեզերքը։ Սեղա-



Սալվադոր Դալի

նը դրված է բնության մեջ՝ լեռներով շրջապատված ծովի ափին։ Կենտրոնում նստած է Քրիստոսը՝ պարզ ու շիտակ կեցվածքով՝ հայացքն ուղղած անսահմանությանը, ձեռքերն ինչ-որ բան ասելու կամ պատմելու ժեստերի մեջ են։ Բոլոր առաքյալները, առանց բացառության, գլխահակ են՝ փաթաթված սավաճաններով, որոնց տակից ակնհայտ զգացվում է նրանց ընկճվածությունը, Ուսուցչից ասես թաքնվելու ամոթահար վիճակը։ Ահա որոտի, ամպրոպի ու անձրեւի սպասող երկնքում կախված են երեակայական վերնատան կամարակապ տանիքն ու սյուները, որոնց վրա երեւում է արդեն հարություն առած Տիրոջ իրանը՝ թելերը պարզած օրվա խորհրդի վրա։ Սեղանին մեկ գինու գավաթ է եւ մեկ պնակ, որոնք դրված են միայն Տիրոջ առջեւ, եւ երկու կես արված ինչ-որ պտուղ՝ զուգահեռ դիրքերով՝ սեղանի առաջին պլանում։ Դժվար չէ կռահել, որ Դալիին ամենից շատ հուզել է Ուսուցչի եւ աշակերտների բաժանման դրամատիզմը։ Հետաքրքիր է նաեւ այն փաստը, որ

կան անխուսափելի երեւոյթ։ Ռեքրիսի՝ եռապատկեր հիշեցնող կտավի կենտրոնում՝ կլոր փոքրիկ սեղանի մոտ, վեհորեն ու խաղաղ նստած է Տերը՝ թագանման ոսկեգույն ու շքեղ լուսապսակով, սեղանի կենտրոնում դրված է ձուկը՝ շուրջը հացի պատառներ։ Տիրոջ առջեւ հաղորդության սկիզբն է, որը Նա օրհնում է, իսկ Նա երկու կողքերին խոնարհաբար կանգնած են աշակերտները։ Նրանք եւս լուսապսակներով են։ Վերնատան շքեղ ու ոսկեգույն կամարների տակ անսովոր խաղաղություն է։ Ռեքրիսի կտավի ոսկեփայլ շքեղությունը, անշուշտ, հնդկական մշակույթի ազդեցությունն է, իսկ կերպարներն ամբողջովին բյուզանդական մանրանկարներից վերցված տիպաժներ են։ Այդ կերպ՝ Ռեքրիսի փորձել է հաղորդել Աստծո խոսքին հնազանդվելու անվերապահությունը՝ անկախ յուրաքանչյուրի հոգում խմորվող հարցադրումներից, անկախ մշակույթների ու քաղաքակրթությունների տարբերություններից։

Շարունակելի
Աստղիկ ՍՏԱՐՈՆԵՅԱՆ

ԱՐԻՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 6

Մոտենալ խաչված Քրիստոսին՝ սիրո Օջախին, սիրո Աղբյուրին, հարության լույսը սփռող Քրիստոսին, հավերժության հույսը պարգեւող Քրիստոսին նշանակում է սեփական թշվառ կյանքը բարեկարգել, բարենորոգել, ճշմարիտ ճանապարհի վրա դնել։ Ինչպե՞ս կարելի է հեզնել նման սուրբ ընթացքը... Մյուս կողմից՝ ուզում եմ քաջալերել մեր հավատավոր քույր-եղբայրներին, որ համարձակ լինեն եւ համոզված, որ այն, ինչ իրենք անում են, սրբություն է, որ իրենց կյանքի ամենակարեւոր գործը հենց այն է, որ իրենց հոգու փրկության մասին են հոգում։ Եվ եթե մեկն անդառնալի ու անզեղ նյութապաշտ է կամ մարմնամուլ, թող այդպես էլ իր ընթացքով գնա, բայց սուրբը թող սուրբ էլ պահի իր անձը, որովհետեւ Քրիստոսը «շուտով պիտի գա»։ Եվ երբ Քրիստոսը գա, ըստ

Սուրբ Գրքի, ոչ մի մեծությունից չի խորշելու, ոչ մեկից չի քաշվելու, քանզի ամենքին Ինքն ստեղծեց։ Եվ բոլորը պիտի երկրպագեն Իրեն, պիտի ծուկի իջնեն, ոմանք պիտի ողբան ու լան, որովհետեւ անհույս պիտի լինեն, իսկ ոմանք էլ պիտի ցնծան եւ ուրախանան, քանզի ա՛յս կյանքում արդեն իսկ ծուկի եկան, լաց եղան ու ողբացին իրենց մեղքերի համար եւ սրբության ճանապարհով ապաշխարությանը առաջ ընթացան։ Այնպես որ՝ չափազանց մեծ արիություն է պետք մարդուն՝ առհասարակ հոգեւոր կյանքով ապրելու համար...

- Տե՛ր հայր, արիությունն ի՞նչ չափով է օգնում մարդուն կյանքի ու մահվան սահմանագծում...

- «Մահ իմացալ անմահություն է»։ պատահական չէ, որ սուրբ Դեոնիս Երեցի այս խոսքն իսկական դրոշակ է դարձել հայ ժողովրդի ձեռքին դարեր շարունակ։ Այս խոսքերով նա ոգեշնչեց ողջ հայոց բանակին ու աշխարհագրին Ավարայրից առաջ։ Ի՞նչ

եր հասկանում Դեոնիս Երեցը՝ «մահ իմացալ» ասելով։ Ոչ ավելին, քան այն, ինչ որ Սուրբ Գիրքն է ուսուցանում։ Այն է՝ Քրիստոսը մեռավ, հարություն առավ, եւ ուրեմն՝ մահը բնաջնջում չէ, այլ... Ընդամենը պետք է արիության սուրբ առաքինությամբ անցնել կյանքի ու մահվան այս սահմանագիծը։ Զե՛ որ իրենք Ավարայրի դաշտում հենց այդ սահմանին էին կանգնած, չէ՞ որ հաջորդ օրն իսկ իրենցից 1036 հոգի պիտի անցնէր այդ սահմանը՝ վկայելու համար, որ իրենք չափազանց թանկ են գնահատում իրենց սրբազան հավատքը եւ պատրաստ են իրենց կյանքը զոհելու այդ հավատքի համար, գնալու դեպի «մահ իմացալ»-ը, ինչը եւ արեցին քրիստոնեավայել արիությանը։ Քրիստոսը մի՞թե նույնը չէր ասում. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար...» (Հովհ. ԺԵ 13)։

- Հոգեւոր արիությամբ զինված մեկը կարո՞ղ է երբեւէ հուսահատվել։

- Ո՛չ։ Որովհետեւ հուսահատությունը հույսի եւ հավատքի բացակայությունն է։ Այս առիթով եւ ուզում եմ որդիաբար եւ եղբայրաբար խորհուրդ տալ մեր Եկեղեցու հավատացյալ զավակներին. ձեր երկրավոր կյանքից որեւէ ասպարեզում կամ որեւէ գործի մեջ ձեր ամբողջ Եւթյունը մի՛ դրեք, այսինքն՝ երբեք մի՛ մտածեք, որ եթե այս գործը չստացվեց, ուրեմն աշխարհը վերջացավ... Ո՛չ։ Մեր հույսն Աստված է, եւ մենք Նրան ենք պատկանում։ Երբեք մի՛ մոռացեք, որ մեր՝ ճշմարիտ քրիստոնյաներիս գերնպատակը հավիտենական կյանքն է։ Ուրեմն՝ մի՛ արժեզրկեք ձեր կյանքը։ Հավատացե՛ք՝ այն շատ ավելին արժե...

Եվ ամփոփելով՝ որպէս պատգամ՝ ուղղված հատկապես մեր երիտասարդներին. սիրելի՛ հայ երիտասարդներ, խորհուրդս ու խնդրանքս է՝ ճշմարտությունը պինդ պահելու համար՝ ներդրեք ձեր ջանքերն ու համարձակությունը, եւ այդ դեպքում ձեր վարձքը Երկնքից պիտի լինի, քանզի ձեր ջանքերը ճշմարիտ

արիության դրսեւորումներ եղան...

Աստված ձեզ եւ մեզ բոլորիս պահապան։

Հյուրընկալեց
Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստարոնյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

17.4.2013 թ.

Տպաքանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ